



ՊԲՀՈՒՐԵԼԻ և միանգամայն զար-
մանալի է կայծակի արգասիքը. որ
և իցէ մարմնոյ վրայ որ անկանի՝ կը
թողու մքենական, տարրաբանական,
քնախօսական, և այլն, արգասիք մը։

Ընդհանրապէս կ'իջնէ բարձր առար-
կայից վրայ, ինչպէս՝ զանգակատանց, աշ-
տարակաց և ծառոց վերայ, և առաւել ևս
մետաղական քալահաղորդ մարմնոց վերայ.
Իսկ կենդանի էակք քան զըոյսս առաւել ևս
քալահաղորդ ըլլալով՝ եթէ մարդ մի կամ
որ և իցէ կենդանի էակ մի գտնուի ծառի
մը մօտ փոթորկի ստեն, ծառէն առաջ կայ-
ծակնակար այն կենդանի էակն կ'ըլլայ. այս
պատճառաւ շատ անխոհեմ կ'ըստին այն
մարդը, որ փոթորկի և որոտմանց ատեն
ծառոց ստորեւ կ'ապաստանի. նոյնպէս շատ
փնասակար է տանց որմին յենած կենալն,
վասնզի կայծակը ուղղակի պատէն վար իջ-
նելով կը հարուածէ գմարդ։

Եղած է որ կայծակը թողլով բարձր ա-
ռարկայներն մտած է վազուկ ջրոյ մէջ, ուստի
զգուշանալու է դարձեալ փոթորկի ժամանակ
զետոց քովերն ապաստանելն, վասն զի յա-
ռաջ քան ի իւր մտնելն՝ գմարդս կը հա-
րուածէ։

Կայծակը երբ տանց վերայ կ'իջնէ՝ պատէ
պատ կ'ըսկսի շրթի, և երբ կը գտնէ քալի-
հաղորդ մարմին մը՝ խկոյն զայն կը տապալէ։
Ասոր ահաւոր զօրութեան դէմ, բնութեան
ոչ մի տարր կընայ ընդդիմանալ, նա ինչ
գիւրութեամբ որ կը ճեղքէ Հինաւուրց
կաղնին, կը մտնէ անոր ցօղնոյն մէջ, կ'այրէ
կը մրկէ անոր արմատներն, մի և նոյն գիւ-
րութեամբ, կը խորտակէ բարձրաբերձ լե-
րանց գագաթները, կը ծակէ և կը խորատու-
զի նոցա երկրաբանական իւտերուն խորը,
մինչև գտնէ մետաղական խաւ մը։

Կը պատմեն որ Մանչեսթրի մօտերն 6
օգոստոս 1809ին կայծակ մը իջեր է աղւեսա-
կերպ 20,000 հազարազրամ կշիռ ունե-
ցող պատի մը վրայ, և զայն առանց կոր-
ծանելու 2 մետր իւր Հիմէն տեղափոխեր

է, թերեւ անհաւատարի թուի ոմանց այս
բանս, և սակայն սմմեստոյգ է. (տես Դէշա-
նել. — Բնաբանութիւն. Fisica. Deschanel,
էջ 525 ծանօթութիւնն)։

Դարձեալ կայծակը մտած է ստորեր-
կրեայ կազերու խողովակաց մէջ, և վառելով
բովանդակ կազերը ահաւոր փնասներ պատ-
ճառած է։ Սոյն մթնոլորտային երկկտրու-
թիւնը այնպիսի զարմանալի երևոյթներ թո-
ղուցած է երկրիս վրայ, որոց ճշդութեան
ոչ միայն ոչ քնազէտն՝ այլ և քնազէտն ևս
կը տարակուսի։

Ուշըֆորի մէջ յամին 1874, յունիս 21,
ժամը 20ին, զարհուրելի փոթորկի ատեն,
կայծակ մը կը հարուածէ անագէ գունատ մը,
ասոր մեծձ լինելով խեցեղէն անօթ մը իւ-
կոյն կ'անագագծուի, բաց աստի, սպակեայ
բաժակ մ'ալ արտաբուստ որդան կարմրի
գունով կը գունաւորուի, և ներքուստ կ'ոս-
կեցօծուի ?։

Շանթը կամ կայծակը երբ կ'իջնէ ծառի
մը վրայ միշտ նոյն արգասիքը չի ցուցնե-
ր. երբեմն մտնելով ուղղակի ծառին մէջ տեղն
զայն երկուքի կը բաժնէ, երբեմն մտնելով
սպիտակէն մէջ՝ զայն կ'այրէ։ 1894ին ի Սիսնէ
կաղնոյ մը վրայ կ'իջնէ կայծակ մը, նորա բոլոր
սպիտակը կը շոգիւացրնէ և ծառին ամենեւին
չի փնասեր։ Ի Հայս Գողթան կողմերն յՈր-
դուատ, նշանաւոր սօսիին վրայ կ'իջնէ կայ-
ծակ մը, որոյ բովանդակ վերին ճիւղաւորու-
թիւնքն կ'այրէ մոխիր կը դարձունէ, իսկ բունը՝
որուն փապարածին մէջ 10 մարդ կրնայ հան-
զընտեամբ ճաշել, բոլորովին անփնայ կը մնայ
շանթէն։

Ամէն ծառ կայծակէն չի զարնուիր, այլ
ընդհանրապէս կը հարածուին Հինաւուրց
կաղնիք, սօսիք, և այլն։ Անուանի Գինեւ-
ոացի քնազէտն Պ. Դանիէլ Վոլլատոն 1873ին
հրատարակած է մի Հետաքրքրական հաւ որ
է՝ Կայծակի արգասիքն՝ ծառաց վրայ։ Նա դի-
տած է, որ երբ կայծակը որեւիցէ ծառի մը
վրայ իջնէ, միշտ իրեն բնորոշ նշաններ կը
թողու։

Ամենէն առաջ կայծակնահար ըլլալու են թակայ կը համարուի երկաթուղւոյ կառախումբը. վասն զի երբ շոգեկառքը սաստիկ արագութեամբ կը սուրայ, իւր ետեւ օդոյ գատարկութիւն մը կը թողու. իսկ կայծակը երբ կը գտնէ՝ այս օդոյ գատարկութիւնը,

առանց ունիցէ ընդդիմութեան բոլոր երկաթուղւոյ կառախումբը կայծակնահար կ'ընէ. պատճառն ոչ միայն օդոյ գատարկութիւնն է, այլ նաեւ կառախմբոյ մեծաքանակ երկաթոյ զանգուածն: Նիւ-Եորքի մէջ, ուր ըստ սովորութեան շոգեկառքը սաստիկ արագու-



Մեծ Սուի յիմարտան

թեամբ կը վազցընեն, անգամ մը կայծակ իջնելով՝ մեքենավարը կը թմրեցընէ, հնոցապաշն կը խելագարցընէ, և բովանդակ շոգեկառքը իւր սրարչաւ ընթանալէն կը կեցընէ: Դարձեալ կայծակնահարութեան առաջ-

նակարգ ենթակայ է այն մարդն, որ փութորկի ժամանակ սաստիկ արագութեամբ կը վազէ, կայծակը նորա օդը կտրած ուղղութեամբ՝ իր ետեւէն կուգայ կը հարուածէ զանիկայ:

Էյֆելեան աշտարակը կրնանք համարել Պա-
րիսու յաղթանդամ շանթարգելն. նորա կանգ-
նուելէն մինչև ցարդ՝ նոյն քաղքին շէնքերն
կայծակի հարուածներէն լաւ պահպանուած
են, վասնզի, սա շարունակ իրեն կը ձգէ շան-
թերն և ուղղակի հողոյ մէջ խորասուզելով
կ'ոչնչացընէ անոնց աւերիչ արեւասիւքն: 1889
օգոստոս 10ին ուժգին կայծակ մը կ'իջնէ
այդ աշտարակին վրայ, սակայն այն երկաթեայ
վիթխարի զանգուածը և ոչ իսկ կը շարժի:
Դարձեալ կայծակն մարդուս վրայ իջած

միջոց՝ շատ քիչ անգամ կը մեռցընէ. ընդ-
հանրապէս կիսով չափ անդամաւոյժ կը դար-
ձունէ զայն, մարմնոյն վրայ եղած բոլոր
մազերն կ'այրէ, անմազ անմորուս կը թողու-
գմարդ, ինչպէս պատահած է նաւաստիի մը
1812ին: Զարմանալի է դարձեալ՝ որ կայծակը
իջնելով յօղացաւով ախտացեալի մը վրայ,
բոլորովին նորա հիւանդութիւնն անցուցեր է:
Իսկ Արակոյ կը պատմէ՝ թէ կայծակ մը
իջնելով կաղամախի մը վրայ, փոխանակ
խորտակուելու՝ սկսեր է իսկոյն հասակնետել:

ՔԱՐՄԵՆ ՍԻՆՎԱ

ՅԱՏԼԱՆՏԵԱՆ ԱՎԿԻԱՆԱՅ

Իմ մանկութեան հանգուանակ
Լի զօրութեամբ և սրգով,
Յաբին՝ գիմեն մարնչելով
Քո թաղծալի տխուր կոհակը:

Եւս ի պարզի շարալլուկ՝
Օտարոտի պինդ բաղկաւ,
Յողբս, ի կառաչ անզրբաւ,
Ուռնուս աճես շառաչուկ:

Յանդուքն, անսաստ, միշտ մուլի
Երկրին՝ որ կայ ի քուն խոր,
Միշտ ալէժուփ, յերգըդ նոր
Խաղաղաւէտըն խըմբի:

Թումբըս զինեւ ուամբարտակ
Ի նուանել զիս կանգնեցին,
Ընդ քեզ պանդոյբըն կամին
Դաշն, Ովկիան, կռել կամակ:

Զուրցդ ի ցածնուլ վըստահին
Ի մըրըրկին կարապետ,
Այլ ըմբընին յահափետ,
Երբ ի մի շունչ թումբը քանդին:

Մանուկ տիղս հանգուանակ
Անծայր, ցաւոտ, փըրփրակոյտ,
Ինձ, Ովկիան, թուխ լայն, մուլի
Մըխեալ ի խոհ անգիտակ:

Թրգւ. Հ. Արսէն Ղազիկեան